ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լոռվա կանաչ բարձրավանդակում՝ Ձորագետի նշանակալի կիրճի կողքին է գտնվում Ստեփանավան կոչվող գողտրիկ քաղաքը, որը հաճախ անվանում են Լոռվա մարգարիտ:

Դեռևս մ.թ.ա. II-I դարերում Ստեփանավանն իր շրջակայքով կազմել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի մի մասը և մտել է Արտաշեսյան թագավորության մեջ: Մ.թ.ա III-II-րդ հազարամյակներում ներկայիս Ստեփանավանից 1 կմ հեռավորության վրա՝ արևմտյան մասում են պահպանվել անմշակ ժայռաբեկորներով կառուցված միաշար պարիսպներով ամրոցի առանձին հատվածներ:Քաղաքի շրջակայքում պահպանվել են նաև մ.թ.ա. XIII-IX դարերում ձևավորված դամբարանադաշտեր:

Մ.թ. 1-ից 4-րդ դարերում Ստեփանավանը եղել է Արշակունյաց թագավորության կազմում: 385 թ.-ին Մեծ Հայքի բաժանումից հետո Տաշիր գավառի մեջ մնացել է հայկական մարզպանության կազմում: Քաղաքի հնադարյան պատմության վկայություններից մեկը հարավ-արևմտյան մասում գտնվող V-VI դ.դ. «Չեչմանիս» եկեղեցու պահպանված խորանի հատվածի երկու առանձին մասերն են և եկեղեցու հյուսիսային պատի մոտ, ներքուստ, դրված երկատված խաչքարը:

Որպես բնակատեղի, Ստեփանավանը սկիզբ է առել V դարից, ինչը հիմնավորում է V-XII դարերում քաղաքի հուսիս-արևմտայն մասում, Ձորագետի կիրճում, գետի ձախափնյա ձորալանջին կառուցված և ներկայումս պահպանված «Աչաջուր» գյուղատեղի կիսավեր եկեղեցին՝ շուրջը կանոնավոր քարերով շարված մի քանի շինությունների փլատակներով:

10-րդ դարում Ստեփանավանը եղել է պատմական Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյանների) թագավորության մայրաքաղաքը: Դավիթ Անհողին թագավորի (989-1048 թթ.) օրոք Կյուրիկյանների թագավորությունը հզորացել և ընդլայնել է թագավորության տարածքները, իսկ Ստեփանավանի տարածքը «Լոռե» անվանումով կազմել է թագավորության կալվածքի մի մասը: 1118-1122 թթ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը մաքրել է Լոռին թուրք սելջուկներից և այն միացրել Վրաստանին: 1185 թ.-ից սկսած Ստեփանավանն իր շրջակա տարածքներով Լոռու կազմում տրվել է Զաքարյաններին:

Համայնքը բազմադարյան պատմության մեկ այլ վկայությունը՝ քաղաքի արևմտյան մասում, Ձորագետ և Օրան-Լոռե գետերի միախառնման տեղում, բարձր հրվանդանի վրա XII-XVII դարերում կառուցված «Օրան-Լոռե» գյուղատեղին է, որտեղ ներկայումս պահպանվել են ուղղանկյուն հատակագծով բնակելի շինությունների հիմնապատերը:«Օրան-Լոռե»-ի սահմանից ներքև՝ Տաշիր գետի կիրճում է գտնվում միջնադարյան գյուղատեղի, որը տարածված է կիրճի թեք լանջով,տարածքում կան ժամանակաշրջանին բնորոշ խեցեղենի բեկորներ:

17-րդ դարի սկզբին Ստեփանավանի տարածք են գաղթել Շահ Աբասի հալածանքներից փախած հայեր և հիմնել են Չեչմանիս բնակատեղին:

1801 թվականին Լոռու կազմում Ստեփանավանի տարածքը միացվել է Ռուսաստանին: Այդ տարիներին Ցարական Ռուսաստանի Եկատերինա կայսրուհու գահակալության ժամանակներից սկսած այս տարածքներ են աքսորվել մեծ թվով սպաներ, նաև կուսանոցների կույսեր, ովքեր ընտանիք կազմելով 1804 թվականին հիմնել են Սլաբոդկա անունով նոր թաղամասը, որի կառուցապատումն իրականացվել է շինարարական որոշակի սկզբունքներով: Այս պատճառով հետագայում գյուղը

հաճախ են կոչել գյուղաքաղաք, քաղաք: Ներկայումս դրանք Կոմիտաս, Մայակովսկի, Անդրանիկ փողոցներն են, ուր մինչև հիմա էլ կան ռուսական տնաշինական ոճով կառուցված տներ: Մայակովսկի փողոցի տներից մեկում էլ բնակվել է ռուս մեծ բանաստեղծ Մայակովսկու մայրը՝ Ալեքսանդրա Պավլենկոն իր ծնողների հետ:

1810 թ. տարածքը հանդես է եկել որպես քաղաք և կրել է Ջալալօղլի (Ջալալի որդի՝ իրանալեզու ծագումնաբանությամբ) անվանումը՝ ի պատիվ Արցախի իշխանական տոհմի՝ Հասան-Ջալալյանների: Այս մասին է վկայում Ստեփանավանի քաղաքային գերեզմանատանը պահպանված հուշաքարը հետևյալ հայատառ մակագրությամբ՝ «Ավանս հիմնեց որդին իշխան Դավիթ Հասան-Ջալալյանց՝1810»:

1826 թվականի ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ստեփանավանում տեղակայված ռուսական կայազորը, որը գլխավորել է ռուս անվանի զորավար, 1812 թվականի Հայրենական պատերազմի հերոս, գեներալ-լեյտենանտ Դենիս Դավիդովը:

1829 թվականին Ստեփանավանի կիրճում ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը հանդիպել է ռուս բանաստեղծ և դիվանագետ Ալեքսանդր Գրիբոեդովի դին Թեհրանից Թիֆլիս տեղափոխող մարդկանց:

1842 թվականի աշխարհագիր մատյաններում գյուղաքաղաքը, ինչպես նաև Ստեփանավանի կիրճով անցնող Ձորագետը նշվում է Կամենկա անվանումներով:

Ստեփանավանում գործել է չորսամյա երկսեռ դպրոց, որտեղ 1879-1883 թթ. կրթությունն է ստացել մեծ գրող Հովհաննես Թումանյանը: 19-րդ դարի վերջին այս դպրոցում է դասավանդել ազգային- ազատագրական շարժման հայտնի գործիչ Հովսեփ Արղությանը:

1918 թվականի մայիսի 19-ից 21-ը Ստեփանավանում է գտնվել հայկական բանակային կորպուսի դիվիզիան՝ գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ, որն այդ օրերին քաղաքի մատույցներում կատաղի մարտեր է վարել թուրքական զորքի դեմ: Նույն թվականին, երբ Հայաստանի և Վրաստանի միջև տեղի է ունեցել զինված բախում, ստեղծվել է Լոռու “Չեզոք գոտին”, որտեղ ընդգրկվել է նաև Ստեփանավանի տարածաշրջանը: Այս ժամանակաշրջանի հայ ազգային-ազատագրական պայքարն է նկարագրել գրող Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» «Բերդ» գլխում:

1921 թ. փետրվարի 11-ին Լոռու "Չեզոք գոտին" վերացվել է, և Ստեփանավանը՝ շրջակա գյուղերով միացվել է Լոռի-Փամբակի գավառին, որը Խորհրդային Հայաստանի 9 գավառներից մեկն էր:

1923 թ. ի պատիվ 20-րդ դարի ականավոր քաղաքական գործիչ Ստեփան Շահումյանի, որը 1899 թվականին Ստեփանավանում հիմնել է Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը, քաղաքը վերանվանվել է Ստեփանավան: Ստեփանավան քաղաքը զգալի տուժել է 1988-ի Սպիտակի երկրաշարժից: Երկրաշարժից հետո քաղաքը վերակառուցվել է և տարածվել նաև Ձորագետի ձախ ափին:

2018 թ. համայնքների խոշորացման արդյունքում Ստեփանավան քաղաքին են միացել Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր վարչական բնակավայրերը:

Ստեփանավան խոշորացված համայնքն օր օրի գեղեցկանում ու զարգանում է և իր գունագեղ առանձնահատկություններով գրավում է աշխարհի տարբեր մասերից մեր երկիր ժամանող զբոսաշրջիկների և հյուրերի:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ստեփանավան համայնքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, որից 1020 հա-ը կառուցապատված: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմումէ 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ: Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտո մայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ - տնտեսական նշանակություն: Ստեփանավանից սկսում են 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր: Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա է գտնվում Ստեփանավանի օդանավակայանը, որտեղ իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ և այն պատկանում է պաշտպանության նախարարությանը: Քաղաքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ստեփանավան համայնքը ունի բարեխառն չափավոր խոնավ կլիմա, տարեկան միջին ջերմաստիճանը 6,6 աստիճան է: Հունվարի միջին ջերմաստիճանը - 4,2 աստիճան է, հուլիսյանը՝ 16,7 աստիճան: Տարեկան թափվում են 683մմ մթնոլորտային տեղումներ: Ձմեռները ձյունառատ են:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) Արմանիս 1.2) Ուրասար 1.3) Կաթնաղբյուր	 5.4 7.2 18.0
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ստեփանավանի շրջան
3.Համայնքի կենտրոնի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	157
3.2) մարզկենտրոնից (կմ)	36
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	20

3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	-
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	36
4.Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1400
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	209.33 / 20933.35
6.Սահմանակից համայնքների անվանումները	Տաշիր, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Սպիտակ խոշորացված համայնքներ և Շիրակի մարզ
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	stepanavan.lori@mta.gov.am stepanavan.hamaynqapetaran@gmail.com
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.stepanavan.am
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+374 256 2 22 33
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	+374 256 2 22 33
11.Համայնքի հեռախոսային կոդը	+374 (256)
12.Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	1901
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	18699
2. Գրանցված ծնունդների քանակը	113
2.Մահացության դեպքերի քանակը	39
3.Ամուսնությունների քանակը	70
4. Ամուսնալուծությունների քանակը	24

5. Տնային տնտեսությունների թիվը	3943
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	828
7. Կենսաթոշակառուների քանակը	3589
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1098

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	5
5. Հանրակրթական դպրոցների քանակը	8
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	2
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	1
9. Մարզադպրոցների քանակը	1

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	113338
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	140
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	3893

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	18110.02
2. Բնակավայրերի հողեր (հա)	794.28
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	226.99
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	62.62
5. Հատուկ նշանակության	149.58
6. Հատուկ պահպանվող տարածքների	113.83

7. Անտառային	928.98
8. Ջրային	547.05
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	3202
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	1735
11. Խոզերի գլխաքանակը	287
12. Գյուղատնտեսական տեխնիկա	116
12.1 տրակտորներ (քանակը)	116
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	549

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	37
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	94.9
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	այո
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	39
6.2 Էքսկավատորների քանակը	5
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	3
6.5 Աղբատար մեքենաների քանակը	3
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	8.1
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	4
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	66

որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	38
2.Վարչական ղեկավարների թվաքանակը	3
3. Ավագանու անդամների օրենքով սահմանված թվաքանակը	21
4. Ավագանու անդամների փաստացի թվաքանակը	21

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
1.Ստեփանավան համայնքը դարձնել աշխարհին կապված, զբոսաշրջային, ակտիվ, համագործակցող և մեծ պահանջարկ ունեցող համայնք:	1. Համագործակցություն Դեսին քույր քաղաքի հետ, որը հնարավորություն կտա տվյալ քաղաքի պոտենցիալ զբոսաշրջային կազմակերպություններին ներկայացնել համայնքի կողմից առաջարկվող զբոսաշրջային պրոդուկտներ/փաթեթներ, որի արդյունքում կլինի զբոսաշրջիկների ներհոսք: /2025թ-2027թ/ 2.Համագործակցություն ՀՀ և արտերկրի տուրիստական ընկերությունների հետ, որի արդյունքում տեղի կունենա ՀՀ և արտերկրի զբոսաշրջիկների ներհոսք դեպի Ստեփանավան /2025թ-2027թ/ 3. Ստեփանավան համայնքում էկոտուրիզմի եւ արշավային տուրիզմի երթուղիների ստեղծում,որոնք կապում են Ստեփանավան քաղաքը պատմամշակութային եւ բնական գեղատեսիլ վայրերի հետ /2025թ-2027թ/ 4. Ստեփանավան համայնքում հանգստյան տների կառուցում, որը կնպաստի զբոսաշրջիկների ներհոսքի ավելացմանը: /2025թ-2027թ/

2. Ստեփանավան համայնքը դարձնել աշխատող, ագրոտնտեսապես զարգացած համայնք	1. Ստեփանավան համայնքում մշակել ՓՄՁ նոր ֆինանսական աջակցության ծրագրեր, նախագծեր, նոր ներդրումների ներգրավման նպատակով: /2025թ-2027թ/ 2.Ստեփանավան համայնքը բարենպաստ միջավայր է հեռավար աշխատանքի համար,նոր աշխատատատեղերի ստեղծում, ենթակառուցվածքների բարելավում, բնակչության եկամուտների ավելացում, ներքին միգրացիայի կանխարգելում: /2025թ-2027թ/ 3.Ստեփանավան համայնքում ստեղծել զարգացող օրգանական գյուղատնտեսություն, որը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի արտահանմանը և առողջ սնվելու մշակույթի ձևավորմանը: /2026թ/
3. Ստեղծել կրթված, մշակութահեն, նորարարական և ժամանցով հագեցած տեխնոարվեստի կենտրոն հանդիսացող համայնք:	1. Ստետեփանավան համայնքում ստեղծել արդի գրադարան և երիտասարդական կենտրոն /2025-2026թ/ 2. Ստեփանավան համայնքում ստեղծել ոչ ֆորմալ ուսուցման կենտրոններ

4.Ստեղծել մրցունակ, թափանցիկ և տեղեկատվական լայն հարթակ ունեցող տեղական ինքնակառավարման մարմին:	1.Ստեղծել ներառական և բաց կառավարման գործընկերության հարթակ, որը հնարավորություն կտա քաղաքացիների, ՀԿ-ների և բիզնես ոլորտի ներկայացուցիչների առաջարկությունները ՏԻՄ-ին ներկայացնել դիմումների միջոցով /2023-2027թ/ 2. Ստեփանավան համայնքում գործարկել GIS համակարգ, որի միջոցով կիրականացվեն համայնքին վերաբերող և զարգացմանը նպաստող տվյալների հավաքագրում, պահպանում, մշակում: /2023-2027թ/ 3. Ստեփանավան համայնքում ստեղծել տեղեկատվական հարթակ, որը կբարձրացնի հանրային կառավարման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը/2023-2027թ/ 4. Վերազինել համայնքապետարանն անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայով և նորարար թվային ծրագրերով/ լուծումներով, որոնք հասանելի կլինեն համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների աշխատակիցներին: Այդպիսով, համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների միջև կապը ավելի արդյունավետ կլինի և կբարձրանա աշխատակիցների օգգ-ն /2023-2027թ/ 5. Զարգացնել Ստեփանավան համայնքի ֆոնդհայթհայթման ներուժը՝ զարգացման ծրագրերի կայուն ֆինանսավորման համար /2023-2027թ/

5.Ստեղծել դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք:	1.Մշակել կանաչապատման գործընթացն երն ու խնամքն իրականացնող համակարգ, որը նպատակաուղղված է լանդշաֆտների ձևավորմանը/2023-2027թ/ 2. Ստեղծել կոշտ կենցաղային թափոնների վերամշակման արդյունավետ գործող համակարգ, որը կհանգեցնի էկոլոգիապես մաքուր համյանքի կայացմանը:/2023-2025թ/ 3.Ստեղծել էներգախնայող մեխանիզմներ, որոնք հասանելի կլինեն համայնքի բնակիչների համար և կապահովեն գիշերային լուսավորության ցանցը:/2023-2027թ/ 4. Մարդկանց ապահովել պատշաճ կացարաններով՝ պահպանելով սեյսմակայունության, անվտանգության (ստորգետնյա կացարաններ) ներառականության բոլոր նորմերը: /2023-2027թ/ 5.Վերանորոգել համայնքի փողոցները, սալիկապատել կենտրոնի փողոցները քաղաքի բարեկեցիկ և գեղեցկիկ տեսքը ապահովելու համար: /2023-2027թ/ 6.Համայնքում զարգացնել ԱՌԿ կարողությունները և հասարակությանը պատրաստել աղետների դիմագրավմանը՝ թե բնական, թե մարդածին /2023-2027թ/
6.Ձևավորել առողջ և սպորտային համայնք	1. Ստեղծել հեծանվային արահետներ և քայլարշավային ուղիներ, որոնք ակտիվորեն կօգտագործվեն բնակիչների և զբոսաշրջիկների կողմից և որի շնորհիվ համայնքում կավելանա հեծանվասերներ անձանց թիվը :/2023-2027թ/ 2. Ստեփանավան համայնքի բժշկական կենտրոնն ապահովել երիտասարդ և մասնագիտական բարձր որակավորում ունեցող մասնագետներով և ժամանակակից տեխնիկայով: